

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2015թ նոյեմբերի 24-ին

օրակարգը՝

Լսեցին – Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Գ.Գրիգորյանը:

Նիստը նախագահելու համար առաջակվեց պրոֆեսոր Հ.Խաչատրյանի, իսկ որպես նիստի քարտուղար Ա.Ի.Մարտիրոսյանի թեկնածությունները: Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի խորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն հաստատեց թեկնածությունները:

Նիստի նախագահը ձան տվեցի ֆակուլտետի դեկան Տարիել Վլադիմիրի Ղոչիկյանին, ով ներկայացրեց հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին – Անօրգ.և անալ քիմ.ամբիոնի վարիչ Ռ.Ս.Հարությունյանը, օրգ.Քիմ.ամբ. վարիչի պաշտոնակատար Ն.Ա. Դուրգարյանը, Դեղերի տեխ. և էկոնոմիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա. Մ.Հովհաննիսյանը, դեկանի տեղակալ Ս.Ս.Վարդապետյանը, ԵՊՀ պրոռեկտոր Գ.Գրիգորյանը: Ովքեր առաջարկեցին դեկանի աշխատանքը գնահատել բավարար:

Այլ առաջարկներ չեղան:

Որոշեցին – Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը և այն գնահատել բավարար:

ֆակուլտետի գիտական

խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գիտ.խորհրդի քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղոչիկյան

Ա.Ի.Մարտիրոսյան

